ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 091407836, Էլ. հասցե foi@foi.am,
www.foi.am FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

13.11.2019
343-58

Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական
լեզվահասարակագիտական համալսարանի
ռեկտոր տիկին Կարինե Հարությունյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի տիկին Հարությունյան,

Ինֆորմացիայի ազատության կենտրոն է դիմել ԵՊԼՀ-ի «Կոնֆուցիուսի ինստիտուտի» տնօրեն Գոռ Սարգսյանը՝ խնդրելով աջակցել տեղեկություն ստանալու հարցում: Գ. Սարգսյանը զեկուցագրով Ձեզ է դիմել 2019 թվականի օգոստոսի 5-ին, ապա չստանալով լիարժեք արձագանք, կրկին արդեն նոր հարցադրումներով դիմել է սեպտեմբերի 26-ին: Սակայն մինչ օրս չի ստացել իրեն անհրաժեշտ տեղեկությունները՝ ինչի հետևանքով խախտվել է իր տեղեկություն ստանալու սահմանադրական իրավունքը:

Ուստի ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները:

1. Ինչո՞ւ է Յան Մեիխուայի ավիատոմսը գնվել 2 օր ավելի շուտ, քան այն մակագրվել է Նարեկ Անտոնյանի կողմից:
2. Արդյո՞ք Յան Մեիխուայի զեկուցագիրը գործուղման վերաբերյալ պարունակում է բավարար տեղեկատվություն հետագա ձևակերպումների համար:
3. Արդյո՞ք Ձեր կողմից մատնանշված էլեկտրոնային նամակը կարող է հիմք հանդիսանալ ԿԻ բյուջեից ֆինանսական ելք անելու և տոմսեր ձեռքբերելու համար:
4. Խնդրում ենք տրամադրել Յան Մեիխուայի գործուղման հրամանի, հրավերի և ձևակերպումների պատճենները:
5. 11815000773001 ենթահաշվի բանկային քաղվածքում երևում է, որ 2019 թվականի մայիսի 10-ին հաշվից ելք է արվել 4,603,595.70 ՀՀ դրամ՝ «համալրում այլ բանկերից վճարված ԿԻ ծախսեր» մեկնաբանությամբ: Խնդրում ենք

տրամադրել վերոնշյալ այլ բանկերից կատարված ԿԻ ծախսերը ներկայացնող հաշվապահական փաստաթղթերը՝ համապատասխան հիմնավորումներով:

6. Ի՞նչ հիմքով ԵՊԼՀ ղեկավարությունը ԿԻ տնօրենին 2019 թվականի օգոստոսի 5-ից մինչ օրս չի տրամադրել զեկուցագրով պահանջվող փաստաթղթերը:

Խնդրում ենք, տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով՝

ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան